ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N2

N ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Ա-5-1
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան << 30 >>. << 03 >>. 2026թ.

ՀՀ ներքին գործերի նախարարությունը, ի դեմս ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Խ. Իգիթյանի, որը գործում է ՀՀ ներքին գործերի նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և <<Արպանիվ>> ՍՊԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն **Արտյոմ Խանդանյանի** (այսուհետ՝ Վաճառող), հիմք ընդունելով 23.12.2025 թվականին կնքված ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Ա-5-1 գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 8.5 և 8.8 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան, գինը, վճարման կարգը և գործողության ժամկետը

1.1 Սույն Համաձայնագրով Կողմերը համաձայնության եկան և հաստատեցին ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Ա-5-1 ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում ապրանքների մատակարարման ժամկետները երկարաձգել 30 օրացուցային օրով:

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, աշխատանքի կատարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (1) էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ներքին գործերի նախարարությունը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ներքին գործերի նախարարություն	Արպանիվ ՍՊԸ
ք. Երևան, Նալբանդյան 130	հասցե՝ Երևան Նար-Դոս 122
ՀՀ Ֆինանսների նախարարության	Բանկ՝ Ինեկոբանկ ՓԲԸ
գործառնական վարչություն	Հ/Հ 2050022326481001
Հ/Հ 900011042471	ՀՎՀՀ 09209297
ՀՎՀՀ 02882913	Հեռ: (091) 205624
Հեռ. 010 59-61-52	Էլ. Փոստ: automaxtender@mail.ru
Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am	
_____ Խ. Իգիթյան	_____
/ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղարի	(ստորագրություն)
պարտականությունները կատարող /	Կ.Տ
(ստորագրություն)	
Կ.Տ	